ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 05
Ֆաքս (+374 10) 52 42 82

_____ № _____

Ձեր № _____

<<ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆ ՊՐՆ. Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան,

Ի պատասխան Ձեր ս.թ. փետրվարի 5-ի թիվ 193-2 հարցման՝ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի քարտուղարության կողմից էլեկտրոնային հարցումների և դիմումների հաշվառումն իրականացվում է **<<Mulberry>>** փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգով: Համակարգով պահանջվող անհրաժեշտ տվյալները մուտքագրվում են **<<Դիմումներ քաղաքացիներից**>> փաստաթղթի տեսակ դաշտում և իրականացվում է ընդհանուր հաշվառում: Դիմումների ընդհանուր թվաքանակը կազմել է 8545 դիմում, որից 3 դիմում ստացվել է hotline@minfin.am էլ. փոստի հասցեով: Թեժ գծով ստացված էլեկտրոնային հարցումները, բացի ընդհանուր հաշվառումից, հաշվառվում են նաև թեժ գծի գրանցամատյանում:

Միևնույն ժամանակ հայտնում ենք Ձեզ, որ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից իրականացվում է press@minfin.am էլ. փոստի հասցեով զանգվածային լրատվության միջոցների և քաղաքացիների կողմից ստացված էլեկտրոնային հարցումների առանձին հաշվառում, որոնց թվաքանակը 2012 թվականի ընթացքում կազմել է 56:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Կատ.՝ Տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժին
Հեռ.՝ 595-362